ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«15» Սեպտեմբերի 2022թ. ՆՄՈ/530-2022

ք. Արմավիր

«ԵՐՎԱՆԴԱՇԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի N 17-Ն հրամանի 1-ին կետով սահմանված հավելվածի 4-րդ, 5-րդ, կետերը, 12-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունը, 13-րդ կետը և «Երվանդաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի 2022 թվականի օգոստոսի 17-ի թիվ 80 գրությունը.

որոշում եմ՝

1. «Երվանդաշատի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել՝ «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
3. Հանձնարարել «Երվանդաշատի Գևորգ Այվազյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին (Լ. Գասպարյան)՝ ընկերության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ 15.09.2022 **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

X

VERIFIED OCSP 15.09.2022 14:58:03 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505